Doi: 10.56737/2953-7843-2023.06-122

ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

«ԱԶԱՏ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ» ԱՂԱՆԴԻ ՀԱԿԱԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ[1]

ՆԱԽԱԲԱՆ

1920-ական թվականներին, այսպես կոչված, «ազատ եկեղեցական» եւ իբր թե «բարենորոգչական», սակայն իրականում կործանիչ շարժումը խորհրդային իշխանությունները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին (ՀԱԵ) քայքայելու մտադրությամբ դարձրին իրենց քաղաքական դաշնակիցը՝ իրենց գործնական-քաղաքական նպատակներին ծառայեցնելով այդ շարժման գործիչների նեղ անձնական նկրտումները եւ շահախնդրությունները։ Իրականում «բարենորոգչականների» գործակցությունն իշխանությունների հետ նրանց հեռացնում էր իրենց իսկ սեփական ծրագրերի իրականացումից, եւ նրանք դրանով վերածվում էին իշխանությունների ձեռքին ՀԱԵ-ն ներսից քայքայելու սոսկական հլու-հնազանդ գործիքների։ Ակնհայտ էր, որ ՀԱԵ-ի քայքայումից հետո իշխանություններն անպայման պետք է վերացնեին նաեւ, այսպես կոչված, «բարենորոգչականներին»։ Խորհրդային Հայաստանում, անշուշտ, այս շարժման ծավալումը պետք է դիտարկել եւ ընկալել Խորհրդային Ռուսաստանում, ապա ԽՍՀՄ-ում ծավալվող նմանօրինակ շարժումների ընդհանրական համապատկերում՝ իհարկե հաշվի առնելով Հայաստանին բնորոշ եկեղեցական եւ կուսակցական-խորհրդային յուրահատկությունները[2]։

Խորհրդային Հայաստանում «բարենորոգչական» շարժումներից առավել մեծ ծավալում ստացավ «ազատ եկեղեցական» շարժումը։ Ի տարբերություն Ռուսաստանի՝ Հայաստանում, այսպես կոչված, «կեն-

---

[1]* *Ստացվել է՝ 18.05.2023, գրախոսվել է՝ 30.05.2023։*

Էլ. հասցե՝ avag.harutyunyan@yandex.com։

[2] *Տես, օրինակ,* А. С. Степанов, Обновленческий раскол как средство антицерковной политики советской власти в 1922–1923 гг., Автореферат дисертации кандидата исторических наук, М., *2005։*

դանի» եկեղեցական շարժումը, շնորհիվ ՀԱԵ-ի բարձր եւ միջին աստիճանի հոգեւորականության հաստատակամության եւ վճռականության, հետագա ընթացք չստացավ։ Իշխանություններն «ազատ եկեղեցականների» հետ բանակցությունների վարումը (համապատասխան հրամայական հանձնարարականների փոխանցումը եւ ուղղորդումը) հանձնարարել էին սկզբում Արամայիս Երզնկյանին, բայց Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախագահության 1923 թ. սեպտեմբերի 10-ի որոշմամբ այն վերահանձնարարվեց առավել «փափուկ» դիրքորոշմամբ առանձնացող Գրիգոր Վարդանյանին[3]։

Իսկ այն, որ «ազատ եկեղեցականների» համար ամենից համոզիչ փաստարկներից մեկը ֆինանսական բաղկացուցիչն էր, իշխանությունները հստակ տեսնում էին։ Եւ այդ իսկ պարզ պատճառով նրանք առաջին հերթին լուծեցին նշված խնդիրը։ Անգամ հաշվի առնելով Խորհրդային Հայաստանի ֆինանսական սուղ հնարավորությունները՝ Անդրկովկասի Դաշնության ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1924 թ. դեկտեմբերի 31-ի որոշմամբ ՀՍԽՀ ժողկոմխորհին տրամադրեց 5000 ռուբլի՝ հայ հոգեւորականության քայքայման գործն ավելի արդյունավետ կազմակերպելու համար[4]։

Հայաստանի կոմկուսի պաշտոնական խոսնակը, ՀԱԵ-ի քայքայումը միանշանակորեն դիտարկելով բուրժուական գաղափարախոսության ընդհանուր համապատկերում եւ հանգամանալից անդրադառնալով նոր ծավալվող շարժմանը, միաժամանակ քննադատաբար մոտենալով հարցին, մեթոդական հետեւյալ ցուցումներն էր տալիս. «Տարբերությունն այն է միայն, որ «նոր» եկեղեցին «պաշտպան» է հանդիսանում հեղափոխության եւ հայտարարում է, որ եթե աստված չկամենար հեղափոխություն էլ չէր լինի։ Որովհետեւ մեր մասսաների մեծ մասը դեռեւս այնքան նախապատրաստված չէ իսկույն եւեթ ջոկելու ճշմարտությունը խաբեությունից, ուստի մեր ամենաառաջնագույն աշխատանքը պիտի լինի կատաղի պայքար մղել այդ նոր տեսակի մոլորության դեմ եւ մասնավորապես մեզ մոտ Հայաստանում անհրաժեշտ է ամենալուրջ աշխատանքը այդ առթիվ, քանի որ մեր մասսաները բնավ իրազեկ չեն այն խորամանկ միջոցներին, որ գործադրում են «վերածնված» եկեղեցու սպասավորնե-

---

[3] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 36ա։*

[4] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 26, թ. 14։*

ը՝ իրանց աստվածածնունդ կաշին փրկելու համար։ Մերկացնել նենգավոր խաղերը, բանալ մեր մասսաների աչքերը եւ ցույց տալ կրոնի եւ եկեղեցու հաշիշի արմատական վտանգը՝ ահա մեր գործը։ Այս պայքարը գուցե երկար ժամանակի գործ է, բայց նա անհրաժեշտ է։ Որովհետեւ չկա ոչինչ ավելի վտանգավոր, քան հոգեւոր խավարը»[5]։

Այն, որ իշխանությունների համար նշյալ շարժումն ընդամենը օգտագործվող գործիք էր ՀԱԵ-ի դեմ պայքարում, վկայում է հակաեկեղեցական պայքարի ղեկավար Աշոտ Հովհաննիսյանի հրահանգը. «Կա հայ կղերականություն, կա նրան սպասարկող կղերական ինտելիգենցիա։ Մենք բացասական վերաբերմունք ունենք դեպի հայ կղերականությունը եւ պայքարում ենք մանավանդ նրա առաջամարտ ինտելիգենցիայի դեմ։ Կա ստորին կղերականություն, գյուղական քահանաներ եւ այլն, որ պայքարում է եկեղեցական հիերարխիայի դեմ։ «Կենդանի» կամ «ազատ» եկեղեցին այդ պայքարի արձագանքն է։ Մենք կռվում ենք նաեւ «ազատ» կամ «կենդանի» եկեղեցու դեմ։ Սակայն եկեղեցու ներսում արծարծվող պայքարը հաշվի ենք առնում որպես դրական մի երեւույթ, որ բնորոշում է իրենով եկեղեցու ընդհանուր քայքայումը։ Մենք քաղաքականապես սխալ պիտի համարեինք անհանդուրժող վերաբերմունք հայտնաբերել դեպի նոր եկեղեցին, որովհետեւ նման վերաբերմունքը կնշանակեր գործնականապես պաշտպանել հին եկեղեցին, մի բան որ ռամկավարների եւ դաշնակցականների գործն է, բայց ոչ մեր»[6]։

1925 թ. դեկտեմբերի 13-ին «Ազատ եկեղեցական եղբայրակցության» հիմնադիր ժողովն ընտրեց խորհուրդ, պատվավոր նախագահ ընտրվեց Մեսրոպ քհն. Մելյանը, նախագահ՝ Ներսես ավ. քհն. Քաջբերունին, անդամներ՝ Հովհաննես քհն. Տեր-Մանվելյանը, Իգնատիոս քհն. Տեր-Մովսիսյանը[7]։

ՀԱԵ-ի ղեկավարությունը եւ Գեւորգ Ե. Վեհափառը փորձում էին Եկեղեցու գիրկ վերադարձնել աղանդավորներին, սակայն բազմակի հորդորների մերժումից հետո՝ 1926 թ. հունիսի 14-ին, Գեւորգ Ե.-ն ՀԱԵ-ից անջատված հայտարարեց եւ նզովեց «Ազատ եկեղեցական եղբայրակցությունը»[8]։

---

[5] Հ.-Ն, Պայքար հոգեւոր խավարի դեմ, «Խորհրդային Հայաստան», 1923, փետրվարի 7։

[6] Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Պրոլետարական հեղափոխությունը եւ ուսուցչությունը, Երեւան, 1925, էջ 5։

[7] Տե՛ս «Ազատ եկեղեցի», 1926, թ. 7–8, մայիս 15, էջ 35։

[8] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 626, թ. 1։

Գերագույն հոգեւոր խորհուրդը «Ազատ եկեղեցի» թերթի եւ «Ազատ եկեղեցական եղբայրակցության» պառակտիչ եւ քայքայիչ գործունեության վերաբերյալ ընդունեց հետեւյալ շրջաբերականը. «Ազատ եկեղեցի» թերթի իսկական նպատակն է ջլատումն եւ եկեղեցական-կրօնական ներքին երկպառակությունը ու վեճեր առաջ բերել Հայաստանյայց միասնական եկեղեցում, օրինակ վերցնելով Ռուսական օրթոդոքս եկեղեցում կատարված պառակտումից, այդ թերթն ու խմբակը բացարձակապես ոչ մի կապ կամ առնչություն չունեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ»[9]։ Ապա՝ 1926 թ. սեպտեմբերի 30-ի նիստում, Գերագույն հոգեւոր խորհուրդն իր ընդունած բանաձեւում մասնավորապես նշում էր. «Եկեղեցական բարենորոգության հարցը կաթողիկոսի կոնդակներով արդեն ընթացքի մեջ է – ազգային-եկեղեցական հրավիրվելիք ժողովում, որ միակ իրավազորն է այդ հարցը լուծելու, դրանից դուրս եւ անկախ որեւէ անձնական կամ խմբական ձեռներեցությամբ եղող փորձեր նկատվում է իբրեւ գիտակցական կամ անգիտակցական անջատողական գործառք, եկեղեցու միությունը քայքայող, պախարակելի է այդպիսի պրոպագանդը, հույս – որ Մեսրոպ նախկին քահանա Մելյանի խումբը զգուշանալով կզգա իրենց գործունեության վնասակարությունը եկեղեցու համար եւ դարձի կգա»[10]։

«Ազատ եկեղեցականներին» լավ ճանաչած եւ իշխանությունների նպատակները ընկալած Խորեն արք. Մուրադբեկյանը Գեւորգ Ե.-ին 1927 թ. հունվարի 17-ին զեկուցում էր. «Իմ ստացած տպավորությունս եւ համոզումս է, որ մեր եկեղեցական կյանքում պառակտողական շարժումը կազմակերպված է կուսակցության գիտությամբ, գուցե եւ որոշմամբ, չեկայի կողմից։ Բայց թվում է կենտրոնը Թիֆլիսն է, այնտեղ ավելի ուժ է տրվում այդ գործելակերպին շատ հայտնի պատճառներով։ Փաստ է, որ չեկան հովանավորում է Ազատ եկեղեցականներին, ըստ ամենայնի աջակցում, սպառնալիքով աշխատակիցներ գտնում եւ մատնություններով պատասխանատվության ենթարկում այն քահանաներին եւ նույնիսկ աշխարհականներին, որոնք դիմադրում են Ազատ եկեղեցական վարձկաններին։ Փաստ է նաեւ, որ Հայաստանի կոմկուսի քարտուղար Ա. Հովհաննիսյանը տեղյակ է անցուդարձին, որ Ազատ եկեղեցական-

---

[9] Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921–38), Երեւան, 1994, էջ 80–81։ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 64, թթ. 35։

[10] Տե՛ս Արտակ եպիսկոպոս Սմբատյանց (Տաուշեցի), Երեւան, 1997, էջ 304–306։ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 69, թթ. 8–10։

ները անպատասխան են մնում, օրենքով թույլատրված ժողովները արգելվում են կուսակցության կողմից, մինչդեռ Ազատ եկեղեցական կոչվածները հովանավորվում են, նրանց ներկայացուցիչը գրպանում պատրաստ ունի հակառակորդներին բանտարկել տալու հրամանը»[11]։

Գեւորգ Ե.-ն Ներքին գործերի ժողովրդական կոմիսար Ս. Մելիք-Հովսեփյանին 1928 թ. նոյեմբերի 11-ին խիզախաբար հայտնում էր. «ՊՔՎ ղեկավարությամբ ազատ եկեղեցական կոչեցյալները դավաճանորեն տանում են իրենց դատապարտելի աշխատանքը Հայ Եկեղեցին պառակտելու համար, այդ ընթացքում նրանք արժանացան միմիայն հայ ժողովրդի միահամուռ ատելությանը, զզվանքին եւ դատապարտությանը, նրանց հետ հավատացյալ ժողովուրդ չկա, մի քանի բախտախնդիրներից կազմված մի խմբակ է, որ այդ գործի մեջ իր նյութական շահերն է հետապնդում»[12]։

ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Հարելով «Ազատ եկեղեցական» շարժմանը՝ Աշոտ եպս. Շախյանը[13] հանդես եկավ մի քանի հակականոնական բնույթի հոդվածներով[14] եւ գրքույկներով։ Նա հեղինակել էր նաեւ մի շարք «աշխատություններ»[15], որոնք իշխանությունները չհրատարակեցին։ Աշոտ Շախյանը նաեւ հրա-

---

[11] Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921–1938), էջ 93–97։ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 76։

[12] Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921–1938), էջ 352։

[13] Ծնվել է 1864 թ. Թիֆլիսում, աշխարհիկ անունը՝ Նիկողայոս։ Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Ս. Էջմիածնի Գեւորգյան ճեմարանը։ 1886 թ. նոյեմբերի 29-ին ձեռնադրվել է սարկավագ, 1890 թ. հոկտեմբերի 14-ին՝ աբեղա, 1893 թ.՝ վարդապետ։ Եղել է Մուղնու վանքի վանահայր եւ Ապարանի ու Աշտարակի գործակալ, 1893 թ.՝ Ալեքսանդրապոլի վիճակի առաջնորդական փոխանորդ, 1895–1905 թթ.՝ Ս. Էջմիածնի Սինոդի անդամ։ Խրիմյան Հայրիկի կողմից եպիսկոպոս օծվելով՝ 1905–1910 թթ. եղել է Ղարաբաղի թեմի առաջնորդ, վերաբացել է Շուշիի թեմական դպրոցը, ծխական դպրոցների թիվը 17-ից հասցրել 100-ի։ 1910–1921 թթ. անպաշտոն ապրել է Էջմիածնում։ 1922–1924 թթ. եղել է Շիրակի թեմի առաջնորդ։ Հարել է «Ազատ եկեղեցական» շարժմանը։ Կարգալույծ է արվել։ Երեւանում աշխատել է տպարանում։ Մահացել է 1926 թ.։ Թաղմանը ներկա էին Աեե անդամներ, 7-րդ օրվա ադվենտիստների հովիվն ու քարոզիչը։ Ս. Լուսավորիչ եկեղեցում խոսել են Մելյանը եւ Բենիկը (տե՛ս «Ազատ եկեղեցի», 1926, թ. 17–18–19, օգոստոսի 15, էջ 33–34։ Մանրամասն տե՛ս անձնական ֆոնդը՝ ՀԱԱ, ֆ. 371, ց. 1։ Կենսագրության մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 371, ց. 1, գ. 5)։

[14] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 371, ց. 1, գգ. 6–8։1924–1930 թթ., շուրջ 350 մեքենագիր եւ ձեռագիր էջ ծավալով։

[15] Տե՛ս, օրինակ, «Քրիստոնեական կրոնը գիտության հետ համաձայնեցնելու մեծ կարեւորությունը եւ հարմար առիթն ու ժամանակը», «Կարգավորություն Հայաստանյայց եկեղեցու» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 371, ց. 1, գգ. 9–11)։

տարակության էր պատրաստել չորս գրքույկ, որոնցից տպագրվեցին միայն երկուսը։ Երրորդ գրքույկը ՀԱԵ-ում իբր ներմուծված ավելորդապաշտությունների մասին էր, չորրորդը ծրագրային ուղղվածություն ուներ՝ ինչ կերպարանք պետք է ստանա ապագա «կենդանի» եկեղեցին, եւ ինչ պետք է անել, որ այն լինի մատչելի։ Այստեղ կվերլուծենք միայն տպագրվածները։

«Հայոց Եկեղեցու բարեփոխության առթիվ» խորագրի տակ հրատարակված առաջին գրքույկում նա ներկայացնում էր կրոնի «այլասեռված» լինելը։ Ապահովագրելով իրեն՝ Շախյանն սկզբում խորհրդային կարգերի գովքն էր անում. «Անհատը եւ ժողովուրդը ազատ են Խորհրդային իշխանության բարեխնամ հովանավորության տակ խղճի եւ կրոնի ինքնիշխանական պատնեշների տիրապետության սահմանների մեջ։ Ազատ են սիրելու եւ պաշտելու իրենց պաշտամունքի առարկան։ Բայց դժբախտաբար ներկայումս եկեղեցին չունի դյութիչ հատկություն, ներկա դարու ոգուն եւ գիտության համապատասխան բեմից հնչող ազդու եւ զորավոր ձայն՝ լուսավորելու հայ ժողովրդի խավարապատ հոգեկան աշխարհը եւ թույլ չտալու, որ մթությունն ու սնոտիապաշտությունները չոքած մնան նրա հոգեկան ներքին աշխարհի մեջ» [16]*։*

Տասնամյակներ շարունակ ՀԱԵ-ին ծառայած եւ եպիսկոպոսական բարձրագույն աստիճանի հասած լինելով՝ նա վերամբարձ տոնով փորձում էր հավաստել. «Պատմության, ժամանակի, գիտության եւ փիլիսոփայության անպարտելի ուժերի առաջ այլեւս չի կարող դիմանալ եւ կանգուն մնալ ժողովրդի հոգեւոր աշխարհը լուսավորելու եւ բարոյական նկարագիրը հղկելու անկարող եկեղեցին, որքան էլ նրա ներկա՝ իրենք իրենց «քաղաքագետ» եւ հայ ժողովրդի «բարեկամ» ձեւացող բարձր հոգեւորականությունը ուժասպառ անե իրեն այդ եկեղեցին կանգուն պահելու զառանցանքով»[17]*։*

Անդրադառնալով Եկեղեցու բարեփոխման խնդրին՝ նա կողմ էր արտահայտվում ՀԱԵ-ի «ոչ թե չափավոր եւ ոչ թե մի քանի շարականների, Մաշտոցի եւ ժամերգության կրճատումի խնդրի, այլ արմատական բարեփոխության, ավելորդապաշտությունների, սրբություն ընդունված մասունքների, կռապաշտությունից մնացած սնոտիապաշտությունը-

---

[16] *Տե՛ս* Աշոտ Արք. Շախյան, *Այլասեռված կրոն, մասն առաջին, Լենինական, 1924, էջ 3։*

[17] *Անդ, էջ 5։*

ների, արտաքին ձեւականությունների, եկեղեցականների անճոռնի եւ այլանդակ հագուստի, քահանաների՝ հրեական եկեղեցուց մտած եւ եպիսկոպոսների՝ հեթանոսական կրոնի քրմապետերի զգեստների, կուսակրոնության, ամենօրյա ժամերգությունների, վանքերի, մենաստանների, կուսանոցների, ուխտագնացության վերացման, թողնելով միայն Ավետարանը, Քրիստոսը եւ նրա վարդապետության ուսմունքը»։ Կոմկուսի քարոզչի վերափոխված Շախյանը պնդում էր. «Բարեփոխված Նոր եկեղեցու վերաբերմունքը դեպի Խորհրդային իշխանությունը պետք է լինի բարեկամական եւ համակրական։ Դասակարգային կռվին պետք եղած ժամանակ բեմից քարոզելով պաշտպանելու է բանվորագյուղացիության շահերը, հետեւելով աղքատներին, տնանկներին, չքավորներին համակրող եւ պաշտպանող եւ մեծատուններին ու հարուստներին խարազանող եւ մտրակող՝ քրիստոնեական կրոնի հիմնադիր Քրիստոսին»[18]։

Ծայրահեղության հասնելով՝ Շախյանը հրատապ էր համարում. «Այլասեռված, նեխված հայկական եկեղեցուց հակաքրիստոնեական եւ օտար եկեղեցիներից ներմուծված սրբերը, սրբությունները եւ ծիսակատարությունները դուրս շպրտելու եւ եկեղեցին իր նախնական պարզության վերածելու» անհրաժեշտությունը։ «Մենք չենք կարող բավականանալ նրանով,– գրում էր նա,– ինչ արվեց 16-րդ դարում։ Հիմա մենք ապրում ենք 20-րդ լուսափայլ դարում, մի դարում՝ որը սկսվում է հնի, փտածի, նեխվածի քանդումով, որը հղի է նոր աշխարհասասան բռնկումներով, եւ կառուցելու է եւ կերտելու է նորը եւ ցանկալին։ Մենք պետք է ստեղծենք նոր եկեղեցի, կենդանի եկեղեցի, Քրիստոսի եկեղեցի»[19]։

Դեռ 1886-ից կուսակրոն դարձած Շախյանն առանձնահատուկ քննադատեց... կուսակրոնությունը։ Ըստ նրա՝ կուսակրոնությունը «քրիստոնեական չէ եւ ուշ ժամանակ է մտցրած եկեղեցու մեջ», եւ «20-րդ լուսափայլ եւ քաղաքակիրթ» դարում «ավելի քան մահացու հանցանք է», փորձեց հիմնավորել, որ քրիստոնեական վարդապետությամբ պարտադիր չէ կուսակրոնությունը, այդ թվում՝ եպիսկոպոսների համար[20]։

---

[18] *Անդ, էջ 7։*

[19] *Տե՛ս* Աշոտ արք. Շախյան, *Այլասեռված կրոն, էջ 21։ Գլխատառերը հեղինակինն են։*

[20] *Տե՛ս* Աշոտ արք. Շախյան, *Կուսակրոնությո՞ւն թե խաբեբայություն, մասն 2, Լենինական, 1924, էջ 3–10։*

Ինքնին խոսուն են գրքույկի ենթագլուխների վերնագրերը. «Կուսակրոնությունը» կամ պոռնկությունը հռոմեական առաքելական եկեղեցում», «Կուսակրոնությունը Հայ Եկեղեցուն օտար է»[21]։ «Պետք է վերացնել «կուսակրոնությունը» մեր եկեղեցուց» ենթագլխում աստվածամերժի վերափոխված Շախյանն անվերապահորեն եզրակացնում էր. «Եւ երբ վարուց եւ բարուց մաքրության խնդիրը կա, կուսակրոնները չեն կարող երբեք վարուց եւ բարուց մաքրություն ունենալ։ Ուրեմն, վերջ «կուսակրոնությանը», վերջ պաշտոնական պոռնկության եւ ցոփության մեր եկեղեցում»[22]։

Իշխանությունը, բնականաբար, ոգեւորությամբ ընդունեց եւ դրական գնահատեց Շախյանի գրքույկները։ Օրինակ՝ «Այլասեռված կրոնը» գրքույկի առթիվ Արմենտան՝ ՀԽՍՀ հեռագրական գործակալությունը, հատուկ հարցազրույց վարեց նրա հետ։ Նախ նշվում էր, որ գրքույկը «մեծ իրարանցում» է առաջացրել, հարյուրավոր օրինակներով արագ վաճառվել, իսկ դրա դեմ բողոքողները միայն քահանաներն են։ Շախյանն իր գրքույկների նպատակն էր համարում «մտքերի պատրաստումը, որից հետո կանցնեին գործի»։ Ապա հրապարակավ տեղեկացնում էր, որ չի սպասելու հեռացմանը, այլ ինքն է հրաժարվելու թեմի առաջնորդությունից, Սբ. Էջմիածնի միաբանությունից, որ ինքն այլեւս «հին եկեղեցու եպիսկոպոս չէ, այլ եպիսկոպոս Քրիստոսի նոր կազմվելիք կենդանի եկեղեցու»[23]։ ՀԽՍՀ պաշտոնական խոսնակն այս կապակցությամբ գոհունակությամբ հայտնում էր, որ մինչ Գերագույն հոգեւոր խորհուրդը կփորձեր Շախյանին այլ թեմերում առաջնորդի պաշտոնով հրապուրել, վերջինս արդեն հրաժարվել էր Եկեղեցուց[24]։ Նույնիսկ իշխանությունների հրահանգով հատուկ գրախոսական հրապարակվեց, որտեղ շեշտվում էր, որ իբր Եկեղեցու պատմության մեջ չի եղել շրջան, երբ մի եկեղեցական սուր քննադատեր Եկեղեցին ու նրա ղեկավարությանը։ Գրքույկը դիտարկվում էր դասակարգային պայքարի դիրքերից. «Եկեղեցու քայքայումից աշխատավորության համար ոչ թե չարիք, այլ միայն բարիք կարող է ծնել։ Եկեղեցական ռեֆորմները մեզ չեն հետաքրքրում. նրանք մեզ համար ոչ մի կարեւորություն չունեն։ Մենք

---

[21] *Անդ, համապատասխանաբար՝ էջ 11–17, 17–18։*

[22] *Անդ, էջ 22–26։*

[23] *Տե՛ս Արմենտա, Լուսավորչական եկեղեցու քայքայումը. Աշոտ եպիսկոպոսի գրքի առթիվ (զրույց Աշոտ եպիսկոպոսի հետ), «Խորհրդային Հայաստան», 1924, սեպտեմբերի 2։*

[24] *Տե՛ս Էջմիածնականների ֆոկուսները, «Խորհրդային Հայաստան», 1924 հոկտեմբերի 3։*

համոզված ենք, որ այսօրվա բոլոր բարենորոգիչները նույնիսկ իրենց ձեռնարկի հաջողության դեպքում պիտի տեսնեն, որ կրոնն ու եկեղեցին պատկանում են արխիվներին ու պատմության եւ ոչ թե կյանքին»[25]։

Հրապարակվեց Շախյանի հայտարարությունը միաբանության անդամակցությունից եւ Շիրակի թեմի առաջնորդական պաշտոնից հրաժարվելու մասին, ըստ որի՝ այն հիմնված էր «խորին եւ անդրդվելի համոզմունքի եւ անսասան սկզբունքների վրա»[26]։ Արդեն 1924 թ. սեպտեմբերի 6-ին Լենինականի թատրոնում իշխանությունների հովանավորությամբ Շախյանը դասախոսություն կարդաց «Ինչու պետք է բարենորոգել եկեղեցին» թեմայով[27]։

Մամուլը լայնորեն տարածեց գրագրությունը Գեւորգ Ե.-ի հետ։ Շախյանը հատուկ ընդգծում էր. «Արտահայտածս գաղափարներն ու սկզբունքները անհավատության եւ անկրոնության գաղափարներ եւ սկզբունքներ չեն։ Ամենայն հայոց կաթողիկոսը կարող է բանադրել ինձ, բայց չի կարող արգելել ինձ՝ նոր կազմվելիք Քրիստոսի ճշմարիտ եկեղեցու եպիսկոպոս լինելուն։ Եթե էջմիածինն ընդունակություն ունենա ըմբռնելու թե ժամանակի պահանջը եւ թե Քրիստոսի ավետարանի ոգին, պետք է ինքն էլ միանա եւ ամեն ջանք գործ դնի եկեղեցին նախնի դարերի մաքրության եւ ճշտության վերածելուն եւ ժողովրդին մատչելի եւ օգտակար ցույց տալու, եկեղեցին անկումից փրկելու համար»[28]։

Սակայն Շախյանի կերպարը հանրային կյանքում միանշանակ չէր ընկալվում եւ գնահատվում։ Օրինակ՝ Լեռ Կամսարը հանդես եկավ ծաղրական ոճի երկու ֆելիետոնով[29]։ Շախյանի նկատմամբ միանշանակ չէր պետական անվտանգության մարմինների վերաբերմունքը։ Օրինակ՝ 1923 թ. օգոստոսի 10-ին Արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ Ս. Մելիք-Օսիպովը, քննադատելով նրան, որպես մեղադրանք նշում էր. «Քահանաներ է դարձնում սնունդ ստանալու դիմաց, չարաշա-

[25] Տե՛ս Ա. Ն., «Այլասերված կրոն» Աշոտ եպիսկոպոսի, «Խորհրդային Հայաստան», 1924, օգոստոսի 31։

[26] Տե՛ս Նամակ խմբագրության, «Բանվոր», Լենինական, 1924, օգոստոսի 31։

[27] Տե՛ս «Բանվոր», Լենինական, 1924, սեպտեմբերի 6։

[28] Տե՛ս Լուսավորչական եկեղեցու քայքայումը. Աշոտ եպիսկոպոսն ու էջմիածինը, «Բանվոր», Լենինական, 1924, սեպտեմբերի 7։ «Խորհրդային Հայաստան», 1924, սեպտեմբերի 10։

[29] Տե՛ս Լեռ Կամսար, Ֆելիետոն. Աշոտ եպիսկոպոսի նամակները վեհափառ կաթողիկոսին, «Խորհրդային Հայաստան», 1923, հունվարի 30։ Նոր եկեղեցի. Լուրն ինչպես հասավ երկինք, 1924, հոկտեմբերի 9։

հումներ, յուրացումներ է արել, կաշառք վերցրել, եկեղեցիներում զուտ հակախորհրդային քարոզներ է կարդացել, ընդհատակյա աշխատանք է տանում Ալեքպոլի դաշնակների հետ, որոնց նյութական մեծ օգնություն է ցուցաբերում, որը հայթայթում է Ամերիկայի հետ իր սերտ կապերի շնորհիվ»[30]։ Իսկ 1924 թ. փետրվարի 29-ի զեկուցագրում ավելի էր հստակեցնում Շախյանի բնութագիրը. «Եղած բոլոր փաստերի համաձայն վերջին շրջանում Աշոտ եպիսկոպոսը Լենինականի գավառում բառի բուն իմաստով բավականին վարկաբեկել է թե իրեն եւ թե իր Հայ Եկեղեցուն[31], իրականում հարգանք չի վայելում»[32]։ Իսկ 1925 թ. հունվարի 3-ին ԱՀ գաղտնի բաժնի զեկուցագրում Շախյանի շուրջ ստեղծված «ոդիսականի» կազմակերպման մեղավոր համարվում էր Խորեն արք. Մուրդաբեկյանը[33]։

ԲԵՆԻԿ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ԱՆԿՈՒՄԸ

Ծայրահեղ ընդգծված արմատական դիրքորոշմամբ առանձնապես աչքի էր ընկնում Բենիկ ծ. վարդապետը[34], որն առաջատար էր գրքույկների քանակով։

Քահանայական դասին ուղղված գրքույկում համարելով, որ մտավորականության, երիտասարդության եւ Եկեղեցու միջեւ կապը կտրված է հատկապես բարձրաստիճան հոգեւորականության պատճառով, որ ՀԱԵ-ն արդեն իր «հինցած ու այժմյան մտքին բան չասող ծեսերով հետ է ընկել, դարձել է կեղծիք, եկեղեցու վերին շերտերը ապականել են իրենց պղծություններով, կեղծիքով, գողությամբ, հղփացումով, ծուլությամբ», անհրաժեշտ էր համարում հինը նորով փոխարինելը։ Նորի հիմքում նա

---

30 Տե՛ս Արտակ եպիսկոպոս Սմբատյանց (Տաուշեցի), էջ 201–207։ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թթ. 32–35։

31 1924 թ. հոկտեմբերի 21-ին ԳՀԽ-ին Գարեգին եպիսկոպոսը հայտնում էր, որ Լենինականում կարդացել է Գեւորգ Ե.-ի կոնդակն Աշոտ եպիսկոպոսին կարգալույծ անելու մասին, եւ բացի կուսակցականներից՝ ժողովուրդը խստիվ դատապարտել էր Շախյանի գործունեությունը եւ արժանի համարել կարգալույծ անելը։ Տե՛ս Արտակ եպիսկոպոս Սմբատյանց (Տաուշեցի), էջ 246–247։ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2497, թ. 54։

32 Տե՛ս Արտակ եպիսկոպոս Սմբատյանց (Տաուշեցի), էջ 235–239։ ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թթ. 7–8։

33 Տե՛ս անդ, էջ 250–254։

34 Բենիկ ծայրագույն վարդապետ (Տեր-Դանիելյան Բենիկ Տեր-Ղեւոնդի, 1864–1952) – 1891 թ. ավարտել է Սբ. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, զբաղվել ուսուցչությամբ, աշխատակցել պարբերականների։ Սբ. Էջմիածնի վանական կառավարության նախագահն էր կարգալույծ լինելուց առաջ։

առաջարկում էր դնել՝ «Ճշմարտությունը, արդարությունը, լույսը, հավասարությունը, սերը. ահա ինչ որ ավետարանական եւ անմահ։ Ինչ որ կեղծիք է, այն դուրս պետք է ձգվի թե դավանանքից թե վարչականից թե ծիսականից թե կենցաղականից»։ Նա պնդում էր. «Եթե հայ ժողովրդին պետք է եկեղեցի՝ նա իր ուզած ձեւով կշինի, իսկ եթե պետք չի, չի կամենա՝ թող չշինի։ Մեր երկիրը իր մոխրակույտից հարություն է առնում, վերաշինվում է։ Վերաշինվող հայրենիքի վերաշինողներին ով կուզե լինի սրտով օգնեցեք եւ քաջալերեցեք անխարդախ կերպով»[35]։

Բենիկը քննադատական սլաքը հատկապես ուղղել էր ՀԱԵ-ի ղեկավարության դեմ։ Անգամ հատուկ գրքույկ հրատարակեց[36]։ Հարցը դիտարկելով ժամանակի քաղաքական հովերին ու պահանջներին համապատասխան՝ հեղինակը նշում էր. «Հայոց Եկեղեցին՝ իր մասնակի արժանիքներով հանդերձ, ավանդական, հեքիաթային քնի մեջ մրափած է, լսելու ականջ չունի, տեսնելու աչք չունի, հարություն առնելու շնորհքը չունի, սխալն ու մոլորությունը ուղղելու բարոյական արիությունը չունի։ Ոչ մի շարժում, ոչ մի հառաջդիմական քայլ։ Այդ դեռ բավական չէ, Հայոց Եկեղեցին գործնական քրիստոնեության օրերում որ խորտակում է ամեն մի ձեւականը, երբ ժողովուրդը երեսը թեքած նրանից հեռանում է, նոր-նոր խավարամիտ հետադեմ գործեր է անում եւ տխմարաբար կարծում է, թե ժամանակի արագասլաց անիվը հետ տալ կարող է։ Այդպիսի մի տկարամիտ քայլ է «Էջմիածնի Գերագույն խորհուրդ» ստեղծելը»[37]։ Խորհրդի ստեղծման կոնդակի ներքո իր ստորագրության փաստը նա արդարացնում էր իբր թե իր վախով եւ ստիպված լինելով[38]։ Խստորեն քննադատելով ԳՀԽ-ին[39] եւ պահանջելով այն անմիջապես ցրել՝ նա եզրակացնում էր. «Հայոց Եկեղեցին եթե մի առավելություն ունի գոնե ձեւականորեն էդ նրա ժողովրդական բնավորությունն է։ Եկեղեցին ինքը

---

[35] *Տե՛ս Բենիկ ծ. վարդապետ, Դիմում հայ քահանայության, Երեւան, 1924, էջ 11–12։*

[36] *Տե՛ս Բենիկ ծ. վարդապետ, Էջմիածնի «Գերագույն խորհուրդը», Երեւան, 1924։*

[37] *Անդ, էջ 6–7։*

[38] *Անդ, էջ 8–13։*

[39] *Արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ Ս. Մելիք-Օսիպովը 1924 թ. փետրվարի 29-ին, ճիշտ համարելով Գերագույն հոգեւոր խորհրդի հանդեպ Բենիկի դիրքորոշումը, միաժամանակ նշում էր, որ այդ հարցում «դեր են խաղացել անձնական հաշիվները ու Բենիկի թշնամական վերաբերմունքը բարձրաստիճան հոգեւորականների հանդեպ, ԳՀԽ ստեղծումից հետո Բենիկը հեռացվեց պաշտոնից, ինչը նրա համար ավելի էական դեր է կատարել» (տե՛ս Արտակ եպիսկոպոս Սմբատյանց, էջ 235–239։ ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թթ. 7–8)։*

հայ հավատավոր ժողովուրդն է։ Նա է միակ իրավատերը վարչական, ծիսական, դավանական, տնտեսական խոշոր փոփոխություններ անելու եկեղեցու մեջ։ Ոչ կաթողիկոսը ոչ հոգեւոր դասը առանց ժողովրդի այդպիսի փոփոխություններ անելու իրավունք չունի»[40]։

ՀԱԵ-ի ղեկավարության դեմ մղվող պայքարում, մի կողմ թողնելով բարոյական բոլոր չափանիշները, նա մերկապարանոց փորձում էր պախարակել հոգեւորականության թվացյալ գույքաֆինանսական գործունեությունը։ Օրինակ՝ եկեղեցուց բնակչության իբր թե կտրվելը ներկայացնում էր հետեւյալ կերպ. «Այժմ հայ ժողովուրդը երես է թեքել եւ զզվում է հոգեւորականությունից, իրավունք ունի, որովհետեւ դարերի դիզածը մենք թալանում ենք եւ կթռցնենք, քանի որ դու քնած ես, համր ես, կույր ես»[41]։ Էջեր լցնելով գումարների, կտակների, գանձերի, գույքի, իբր թե, գողության եւ թալանի բազմաթիվ օրինակներով[42], ապա չքմեղանալով՝ հորդոր էր կարդում. «Հայ ժողովուրդ, ես ձեզ ասացի ճշմարիտը, եթե ազգ ես, եթե սրտացավ ես չես լռի, իսկ եթե կլռես չես գա դատ անելու՝ կնշանակի քեզ արժանի «սուրբ հայրերը» հենց էդ եպիսկոպոսներն են, որ կան՝ բարով վայելեք իրար»[43]։

Որպես այսպիսի հակականոնական վարքի արդյունք՝ Գեւորգ Ե.-ն 1924 թ. հոկտեմբերի 7-ի թ. 593 կոնդակով Բենիկին կարգալույծ արեց, ինչին ի պատասխան՝ վերջինս հանդես եկավ նոր գրքույկով[44]։ Զանց առնելով բարոյական եւ կանոնական բոլոր սկզբունքները, Վեհափառին անձնական վիրավորանքներ հասցնելով եւ համարելով, որ իբր անտեղի ու անիրավ կերպով է կարգալույծ արվել՝ Բենիկ վարդապետը քննադատում էր կաթողիկոսի անզորությունը եւ ԳՀԽ-ի անդամների ամենակարող գործունեությունը[45]։

ՀԱԵ-ի դավանանքային կանոններին հակասող գրքույկում Բենիկը պատմության ընթացքում Եկեղեցիների առաջացումը պայմանավորում էր ոչ այլ կերպ, քան հանուն իրենց շահի[46]։

---

[40] *Տե՛ս Բենիկ ծ. վարդապետ, էջմիածնի «Գերագույն խորհուրդը», էջ 16։*

[41] *Տե՛ս Բենիկ ծ. վարդապետ, Թալանի վանքը, Երեւան, 1924, էջ 3։*

[42] *Անդ, էջ 5–13։*

[43] *Անդ, էջ 15։*

[44] *Տե՛ս* Բենիկ ծ. Վարդապետ, *Իմ պատասխանը (էջմիածնի բարոյական ախտաժետներին), Երեւան, 1925։*

[45] *Անդ, էջ 31–68։*

[46] *Տե՛ս Բենիկ ծ. վարդապետ, Քրիստոնեական եկեղեցու աղավաղումներից կամ եկեղեցի, թագավոր, հոգեւոր, Երեւան, 1927։*

Պայքարելով ՀԱԵ-ի դավանաբանական եւ կազմակերպչական հիմնադրույթների դեմ՝ Բենիկը չէր կարող չշրջանցել կուսակրոնության հարցը։ Նա փորձում էր իբր հիմնավորել, որ Ավետարանի համաձայն՝ բոլոր հոգեւորականները պետք է ամուսնանան[47]։ Նրա համոզմամբ՝ «Կուսակրոնությունը հակաբնական է եւ դարձել է անառակության աղբյուր։ Վերջին ժամանակներում Հայոց Եկեղեցու ամուրիությունը լկտի անառակություն է դարձել, իսկ վանքերը՝ անառակության շկոլա, որտեղից անառակությունը ծավալվում է հայ ժողովրդի մեջ»[48]։ Ապա բոլշեւիկյան քարոզչությանը համահունչ լոզունգներ էր հրամցնում. «Դու, հայ ժողովուրդ, կենդանի եկեղեցին դու ես, վերջ տուր այս վնասաբեր ամուրիությանը, ինչպես վերջ տվին անգլիական, գերմանական, շվեյցարական եւ այժմ ռուսական «կենդանի» եկեղեցիները։ Թող կորչի ամուրիությունը եկեղեցուց։ Թող կորչի պղծությունը խցերի, խորանների, տաճարների։ Թող կորչի անառակ վանականությունը»[49]։

Գերազանցապես քաղաքական-քարոզչական բնույթ էր կրում Բենիկի՝ սփյուռքահայությանն ուղղված գրքույկը, որն առանձնանում է նաեւ ծավալով[50]։ Նա նախ կոմկուսի հրահանգչի դիրքորոշմամբ հարցը դիտարկում էր... դասակարգային դիրքից. «Եկեղեցին չարաչար է աղավաղել Ավետարանը։ Ավետարանի բովանդակության մեծ մասը նվիրված է դասակարգային կռվին. նրա քարոզած հավասարությունը իրականություն չի կարող լինել դասակարգային շերտավորումների եւ թագավորական իրավակարգի մեջ»[51], «Հայոց Եկեղեցին իր դասակարգային զորությունը ուժեղացրեց վանքերով»[52], «Պաշտոնական եկեղեցին բարոյական կրոնական օրենքներ է շարադրել հավատացյալների համար, բայց այդ օրենքները չեն կատարել կղերը»[53], «Հայ հոգեւորականները հավատացնում են, թե Հայոց Եկեղեցին կղերական դասակարգ չունի հասա-

---

[47] *Տե՛ս* Բենիկ Ծ. Վարդապետ, *Կուսակրոնությունը անառակություն է։ Մնապաշտությունը քրիստոնեություն չէ, Երեւան, 1924։*

[48] *Անդ, էջ 4։*

[49] *Անդ, էջ 11։*

[50] *Տե՛ս* Բենիկ Ծ. Վարդապետ, *Սրտագին խոսք (Արտասահմանի հայ գաղութներին), Երեւան, 1924։ Դրվատական գրախոսականը տե՛ս «Ազատ եկեղեցի», Երեւան, 1925, թ. 15–16, մայիս, էջ 16–18։*

[51] *Անդ, էջ 4։*

[52] *Անդ, էջ 8։*

[53] *Անդ, էջ 12։*

րակության ուրույն շահերով. այդ խաբեություն է, իրականությունը հակառակն է ասում»[54]։

Անվերապահ ողջունելով խորհրդային փրկիչ կարգերի հաստատումը («Կոմունիստ հայ հեղափոխության ճկուն միտքը տաճիկների սարսափի հանդեպ փրկության ելք հանճարեց»[55])՝ խորապես համոզված փաստում էր. «Հայաստանն իրոք ազատ է իր ինքնուրույն քաղաքական ներքին կյանքով, ազատ իր ազգային անկաշկանդ մտավոր հառաջդիմությամբ։ Քաղաքական ազատությամբ փոխված է մեր երկրի պատկերը»[56]։

Հանգամանալից գովերգելով խորհրդային շինարարությունը, լուսավորությունը, երկրի ապահովությունը՝ Բենիկ վարդապետն անցյալում ՀԱԵ-ի ունեցած մշակութային դերակատարությունը համարում էր ավարտված եւ միանգամայն այլ ուղի էր նշում. «Այժմ այդ եկեղեցին պետք է մերկանա քաղաքական քղամիդից, կուլտուրայի ղեկավարությունից, ձեռք քաշի կաստային շահից ու ձուլվի իր ժողովրդի հետ ու գնա այն ճամբով, որ ճամբեն մտել է այժմ հայ ժողովուրդը։ Իսկ այդ ճամբեն ես համարում եմ Քրիստոսի գործնական ճամբեն։ Եկեղեցուն մնում է մի դեր միայն, այն՝ ինչ որ Քրիստոս է ավանդել իր աշակերտներին. քարոզել Ավետարանի բարոյական գաղափարները»[57]։

Վերջում, խորհրդային քարոզչամեքենային հատուկ ոգով, սփյուռքահայությանը հորդորներ էր կարդում. «Եւ Ռուսական հեղափոխության շեփորը մեզ սթափեցրեց եւ մենք մտանք ուղիղ ճամբան՝ հայ ժողովրդին *Հայաստանի մեջ* թագավոր տեսնելու ճամբան։ *Այդ ժողովուրդն այժմ եւ իր ծառան է եւ իր արքան», «Իմ խորին համոզմունքով ով չի նայում Հայաստանի նոր կյանքի վերակազմության, Հայաստանի վերաշինության, նա հայ չէ, իսկ ով խոչընդոտն է հանդիսանում այդ վերաշինության՝ նա չարագործ է», «Վստահեցնում եմ ձեզ, որ Խորհրդային Հայաստանի այս նորօրինակ իրավակարգի մեջ ձեր կոպեկը չի կորչի, այլ նպատակին կծառայի[58]»։*

Ամենեւին պատահական չէր, որ Բենիկի բոլոր գրքույկներին գովեստի խոսքերով լեցուն ընդհանրական գրախոսությամբ անդրադարձավ

---

[54] *Անդ, էջ 14։*
[55] *Անդ, էջ 30։*
[56] *Անդ, էջ 31։*
[57] *Անդ, էջ 39։*
[58] *Անդ, էջ 41–43։*

ՀԽՍՀ պաշտոնական խոսնակը։ Այդտեղ կոմկուսի գաղափարական հրահանգներին համապատասխան եզրակացվում էր. «Մեր երկրում վերջ է տրվել Հայ Եկեղեցու գոյությանը որպես քաղաքական *գործոնի։ Նա այսօր սահմանափակվում է իր զուտ կրոնական ասպարեզի մեջ, եւ միայն այդ հողի վրա կարող է գործ ունենալ այն անհատների հետ, որոնք տակավին իր հետ կապված են կրոնական կապերով։ Եկեղեցին որպես մասսաների հարստահարության գործիք, հոժար կամքով չի հրաժարվի քաղաքական-հասարակական տիրապետության ձգտումներից։ Պարզ է այստեղից եւ մեր սկզբունքորեն բացասական վերաբերմունքը դեպի «նոր» կամ «բարեփոխված» եկեղեցին։ Պարզ է, որ մենք շարունակելու ենք մեր պայքարը կրոնի եւ եկեղեցու դեմ՝ անկախ «բարեփոխության» կոնկրետ բովանդակությունից։ Ինքնին չենք էլ հավատում, որ եկեղեցին ընդունակ է «բարեփոխվելու»[59]։*

ԱԲԵԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԶԱՐՅԱՆ – ՈՂԲԵՐԳԱԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԸ

Բոլոր բարենորոգչականներից Աբել ծ. վրդ. Նազարյանն[60] առանձնանում էր թե իր հակականոնական դիրքորոշման դրդապատճառ-շարժառիթներով եւ թե այդ ամենի վերջնական հետեւանքով։ Մայր Աթոռն արհամարհաբար մշտապես չակերտներում գրող Աբել վարդապետը ՀԱԵ-ից հեռացմանը նվիրված գրքույկում փորձում էր հիմնավորել իր սնանկ քայլը։ «Խիզախություն» դրսեւորելով՝ նա շեշտում էր, որ հայրենիք է վերադառնում «ոչ որպես էջմիածնի միաբան, այլ որպես ՀՍԽ Հանրապետության քաղաքացի», որ այս քայլին դիմել իրեն դրդում է իբր ոչ թե «անձնական որեւէ դրդապատճառ, այլ խղճի պարտքը»[61]։

Միանշանակ սնապարծության եւ երկերեսանիության արդյունք էր նրա հետեւյալ հայտարարությունը. «Իմ հիասթափությունը հասարակական նշանակության վերագրելով ուզում եմ ասել, որ ես 12 տարի լինելով հայ եկեղեցականության առաջավոր շարքերում, ամբողջ հոգով նրա հա-

---

[59] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, սեպտեմբերի 24։*

[60] *1911 թ. ձեռնադրվել է էջմիածնի միաբան, 2 տարի կրթական եւ վարչական պաշտոններ վարել, հետո ուղարկվել է արտասահման՝ իրավաբանություն սովորելու, 1919-ից Լոնդոնի հայոց հոգեւոր հովիվն էր։ 1922 թ. փոխել է ազգանունը, նախկինում եղել է Աբրահամյան։*

[61] *Տե՛ս* Աբել Նազարյան *(նախկին Աբել ծ. վրդ.), Ինչո՞ւ հեռացա, Երեւան, 1924, էջ 5։*

մար աշխատելուց եւ նրա հակառակորդների դեմ կռվելուց հետո, վերջիվերջո եկել եմ այն համոզման, որ Հայոց Եկեղեցին մեր հասարակական շահերի տեսակետից ոչ միայն օգտակար ծառայություն չի մատուցել ու չի էլ կարող մատուցանել, այլ ընդհակառակը շատ վնասակար է եղել ու վնասակար էլ պիտի լինի, որքան ժամանակ որ նա գոյություն ունենա։ *Հայտարարում եմ, որ Հայ Եկեղեցու համար ոչ մի սրբություն գոյություն չունի, ու այն բոլորը, ինչ որ նա որպես սրբություն է ներկայացնում ժողովրդին, ոչ այլ ինչ են, բայց եթե կեղծիք եւ աչքակապություն»*[62]։

Ավելին՝ ցուցաբերելով հոգեւոր-բարոյական լիակատար սնանկություն՝ նա հայտարարում էր. «Հայ Եկեղեցու քարոզած կրոնին չի հավատում եւ ոչ մեկը նրա եկեղեցականներից։ Ես իմ 12 տարվա եկեղեցական շրջանում չեմ հանդիպել քիչ թե շատ ուսում առած մի հայ եկեղեցականի, տաճկահայ թե ռուսահայ, որ հավատար եկեղեցու քարոզած կրոնին, նրա վարդապետության ճշմարտությանը»[63]։

Շարունակելով փորձել իրեն հուսախաբորեն արդարացնել՝ Աբել վարդապետը քաղաքականապես այն սխալ ու վտանգավոր դրույթն էր փորձում հիմնավորել, թե իբր ՀԱԵ-ի դերը հասարակական կյանքում «միանգամայն վնասակար»[64] *է եղել, որից հետո նա եզրահանգում էր անում. «Այլ կերպ ասած Հայ Եկեղեցին ոչ թե համազգային մի կազմակերպություն է, ինչպես որ կարծվում է, այլ դասակարգային։ Նա հայ ժողովրդի եկեղեցին չէ, այլ հայ կղերականության եւ բուրժուազիայի։ Նույնիսկ այսօր, երբ այլեւս ամեն կասկածից վեր է, որ հայ ժողովրդի կյանքն ու զարգացումը հնարավոր է միայն Խորհրդային կարգերի եւ սոցիալիստական հանրապետությունների համամիության մեջ, դարձյալ Հայ Եկեղեցու աչքը դուրսն է, դարձյալ նա խորթ է համարում այն իրավակարգը, որի մեջ Հայաստանի աշխատավոր մասսաները ազատ շունչ են քաշում հազիվ ազատված երեկվա բռնություններից ու հարստահարություններից»*[65]։ *Ապա վերջում խորհրդային նվիրյալ աթեիստ քարոզչի պես հույս էր հայտնում. «Եւ հեռու չէ այն օրը, երբ հայ աշխատավորության աչքերը պիտի բացվեն, եւ նրա արդար զայրույթի հարվածների տակ վերջնականորեն պիտի փշրվեն Հայ Եկեղեցին ու եկե-*

---

[62] *Անդ, էջ 7։ Այսուհետ ընդգծումները բնագրինն են։*
[63] *Անդ, էջ 9։*
[64] *Անդ, էջ 12։*
[65] *Անդ, էջ 16։*

ղեցականությունը, ինչպես որ փշրվեցան հայ կապիտալիստն ու բուրժուան։ Եւ այն ժամանակ է, որ քաղաքականապես ազատագրված հայ աշխատավորությունը ազատագրված կլինի նաեւ հոգեպես[66]»։

Ինքնասիրահարված եւ սեփական անձը գերագնահատող, բողոքական հովերին տուրք տվող Աբելն անընդհատ գովերգում էր «անգլիկան» եկեղեցին եւ շեշտում Լոնդոնում հայկական եկեղեցու անհրաժեշտությունը. «Անգլիկան եկեղեցին լաւագոյն կենդանի օրինակը կարող է լինել մեր եկեղեցին բարեկարգելու տեսակէտից։ Մի բան, որի պէտքը այնքան զգալի է դարձած։ Լոնդոնի մէջ եղող Հայ Եկեղեցին է, որ այս ընդարձակ դաշտի մէջ լայն յարաբերութիւններ պահելով կարող է դառնալ մի կամուրջ Հայոց եւ Անգլիկան եկեղեցու միջեւ, ինչ որ մեզ միշտ օգտակար եւ երբեք վնասակար կարող է լինել»[67]։

Խարխափելով «անգլիկան» եկեղեցու եւ խորհրդային իշխանության գովերգման միջակայքում՝ Աբել վարդապետը փորձում էր գնահատել ՀԱԵ-ն քաղաքական ու կրոնական տեսանկյունից։ Նշելով, որ անցյալում ՀԱԵ-ի բոլոր քննադատություններն ու բարեփոխման փորձերը մնացել են անարդյունք («հայ լուսավորչական եկեղեցին շարունակեց լճանալ իր դարավոր ճահճի մեջ»)՝ վարդապետը դրվատում էր խորհրդայնացմամբ ստեղծված նոր իրավիճակը. «Խորհրդային իրավակարգի հայտարարած կրոնի ազատությունը թույլ է տալիս կրոնի եւ եկեղեցու նկատմամբ դեմ հայացքների ազատ արտահայտություն եւ գործադրություն։ Հայ ժողովուրդը հավատացյալ թե անհավատ, լավագույն պայմանների մեջ է դրված այսօր, որովհետեւ նա կարող է քննության առնել իր եկեղեցու էությունը առանց արտաքին կաշկանդումների եւ ըստ այդ քննության արդյունքի էլ դիրք բռնել նրա հանդեպ[68]»։

Ավելի պատկերավոր եւ ընկալելի դարձնելու համար նրա հակականոնական եւ քաղաքականապես վտանգավոր տեսությունը՝ որոշ դրույթներ մեջբերենք. «Հայոց եկեղեցին միանգամայն մոռացության է տվել իր զուտ կրոնական հանգամանքը եւ իր ծագումից մինչեւ մեր օրերը զբաղվել է բաղաքական հարցերով», «Հայոց եկեղեցին կամովին փոխեց իր զուտ կրո-

---

[66] *Անդ, էջ 18։*

[67] *Տե՛ս* Աբել Ծ. Վրդ. Նազարեան, *Սուրբ Սարգիս եկեղեցի հայոց Լոնդոնի, Փարիզ, 1922, էջ 17։*

[68] *Տե՛ս* Աբել Նազարյան, *Հայոց եկեղեցին որպես քաղաքական եւ կրոնական գործոն, Երեւան, 1924, էջ 4։*

նական բնույթը, եւ կամովին դարձավ մի տեսակ քաղաքական կազմակերպություն», *«Հայոց Եկեղեցին շատ լավ է իմացել, որ ինքը դրսից եկած, հայ ժողովրդի սրտին ու հոգուն խորթ մի հիմնարկություն է եղել։ Նա նույնիսկ լավ է իմացել, որ ինքը հույն կղերի եւ թագավորների ազդեցության շնորհիվ է միայն կարողացել մուտք գործել Հայաստան եւ հայ ազնվականության վերին խավերի ու սրանց բռնության միջոցով է միայն տարածվել ժողովրդի մեջ»*, «Ամեն որ իր սրտի եւ հոգու մեջ Հայ եկեղեցուց ուղղակի կամ անուղղակի հասած բազմաթիվ վերքեր ունի, որոնք դեռ չեն բուժված։ *Ամեն իրավունք եւ պատասխանատվություն կենտրոնացել է կուսակրոն եկեղեցականության ձեռքում։* Քահանայության նկատմամբ կատարված այս խտությունը ոչ քրիստոնեական է, ոչ էլ հայկական», «Ոչ մի եկեղեցու դաս այնքան թշվառ չի եղել, որքան Հայ եկեղեցունը։ Հայ եկեղեցին դադարել է եկեղեցի լինելուց ու դարձել է լոկ ծիսակատարությունների մի վայր», *«Հայոց Եկեղեցին որպես ղեկավարող մի հիմնարկ մեր ներկա իրականության մեջ տեղ չունի, որով նրա գոյությունը միանգամայն ավելորդ է եւ նույնիսկ վնասակար։ Հայոց Եկեղեցին իր քաղաքական ըմբռնումներով չի համապատասխանում մեր ներկա իրավակարգին, ուստի նա դատապարտված է մահվան»*, «Պահել Հայոց եկեղեցին այնպես ինչպես որ է, դա կնշանակի մեռած դիակը հոտեցնել եւ հետո թաղել։ *Իսկ մտածել, թե կարելի է Հայոց Եկեղեցին բարեկարգելով միայն օգտակար արդյունքի հասնել, այդ էլ ինքնախաբեություն կլինի։ Այսօրվա Հայ Եկեղեցին արմատից է փտած, նա քրիստոնեական կրոնի աղբյուրն է թունավորել, ուստի անհրաժեշտ է հիմքից քանդել նրա խարխլած շենքը, որպեսզի բուն իսկ աղբյուրին հասնենք»*, «Հավատացյալ քրիստոնյան պիտի հիմնի մեր եկեղեցին, որը նրա կյանքը բարելավող մի միջոց լինի, որը իր կյանքի պահանջներին ընդառաջի եւ ծառայի», *«Նոր եկեղեցու մեջ մեծ տեղ պիտի բռնի* ավետարանի խոսքն եւ աշխատանքի պաշտամունքը, *որոնք պիտի փոխարինեն Հայ Եկեղեցու անմիտ եւ աննպատակ ծիսակատարությանը, քարոզը աշխարհաբարով»*[69]։ *Ահա այսպիսի խառնիխուռն եւ պատմաքաղաքական ու եկեղեցակրոնական տարրական քննադատության չդիմացող մտավարժանքներ։*

Աբելին հատուկ գրքույկով՝ հիմնավոր եւ պատճառաբանված պատասխանեց Ս. էջմիածնի միաբանությունը[70]։ *Այդտեղ տեղին եւ ճշմար-*

---

[69] *Անդ, համապատասխանաբար՝ էջ 6, 7, 8, 9, 10, 11, 14, 15, 16։*

[70] *Տե՛ս Նախկին վարդապետ Աբէլ Նազարեանի «Ինչո՞ւ հեռացայ» գրքույկին առթիւ։ Հրատ. Ս. էջմիածնի Մայր Աթոռոյ միաբանութեան, Փարիզ, «Արձագանգ Փարիզի», 1925։*

տացի քննադատվում էր այն հանգամանքը, թե դեռեւս 1911 թ.՝ Ս. Էջմիածնում աբեղա կարգվելուց, երդվելուց ու հոգեւոր սպասավորության անցնելուց հետո, միայն Խորհրդային Հայաստան գալով՝ Աբելը «թունդ հակակրօնական ընթացք է բռնել եւ թշնամական դիրք՝ դէպի յատկապէս Հայոց Եկեղեցին եւ Ս. Էջմիածինը»[71]։ Որպես սկզբնապատճառ՝ նշվում էր Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցու հոգաբարձու Նուպար Կյուլպենկյանի կնոջ հետ Լոնդոնից Փարիզ փախչելը[72], ինչի առթիվ Լոնդոնի հայ գաղութի ընդհանուր ժողովը բողոքել էր Գեւորգ Ե.-ին։

Փաստորեն՝ մինչ այդ մշտապես ՀԱԵ-ն ջատագոված ու փառաբանած[73], Ս. Էջմիածինը եւ Վեհափառին պաշտպանած Աբել Նազարյանի կեցվածքն անսկզբունքայնության եւ բարոյազուրկ անձնական-կենցաղային դրդապատճառների արդյունք էր։ Գրքույկում ներկայացված է 1923 թ. փետրվարի 5-ին Աբելի՝ Գեւորգ Ե.-ին ուղղած հետեւյալ հրաժարագիրը. «Հոգեկան երկարատեւ մի պայքարից յետոյ, այսօր ամենայն լրջութեամբ *գալիս եմ յայտնելու Ձերդ Վեհափառութեան, որ հրաժարւում եմ եկեղեցական կոչումից.* հրաժարւում եմ, որովհետեւ սիրում եմ մէկը, որին որոշած եմ ցմահ պատկանիլ։ *Թող ազգն ու Ձերդ Վեհափառութիւնը ներողամիտ լինեն, որ միայն այսքան կարողացայ ծառայել որպէս հայ եկեղեցական»[74]։ Այսինքն՝ ի սկզբանե գաղափարաքաղաքական կամ հավատամքային հիմնավոր պատճառ չի եղել, «մեղավորը» նրա սիրահարված լինելն էր։*

Աբելը 1927 թ. փետրվարի 10-ին մեղայական նամակ հղեց Գեւորգ Ե.-ին, որի դրդապատճառը... եկեղեցական ամուսնության թույլտվության վերաբերյալ նրա կնոջ խնդրանքն էր։ Նա իբր մեղավոր էր զգում Վեհափառին երկու առթիվ վշտացնել. «1. հոգեւոր կոչում թողնելն, 2. հակաեկեղեցական գրքույկ հոդված գրելն։ 1-ինի առթիվ խիղճս հանգիստ է, այսօր երջանիկ ենք ես եւ կինս. մեր անդրանիկ զավակին մկրտեցինք Փարիզի եկեղեցում։ 2-ի առթիվ խղճի թելադրանքս է բա-

---

[71] *Նախկին վարդապետ Աբէլ Նազարեանի «Ինչո՞ւ հեռացայ» գրքոյկին առթիւ, էջ 1։*

[72] *Աստվածամերժության ջատագով Արտաշես Կարինյանը քննադատեց Աբելի կողմից Նուպար Կյուլպենկյանի՝ եկեղեցի կառուցելու համար տված գումարի եւ կնոջ յուրացման փաստը. «Իզուր են կարծում մեր եկեղեցականները, թե նրանք կարող են իրենց արվեստական միջոցներով եւ բարենորոգչական ծրագիրներով վերակենդանացնել հայ եկեղեցական Մոլոքի խարխուլ մարմինը» (տե՛ս* Լ Ի Ն Ջ, *Մի պտույտ հայ լուսավորչական եկեղեցու անդաստանում, «Խորհրդային Հայաստան», 1923, հունիսի 24)։*

[73] *Տե՛ս, օրինակ,* A B R A H A M I A N, The Church and Fait of Armenia. London, 1920:

[74] *Նախկին վարդապետ Աբէլ Նազարեանի «Ինչո՞ւ հեռացայ» գրքոյկին առթիւ, էջ 14–15։*

ցատրություն գրել։ Եկեղեցական կոչումից հրաժարվելուց հետո իմ մեջ շարունակեց վառ մնալ իմ ազգին ծառայելու փափագը։ Սակայն, երբ խորհրդային սահմաններից ներս մտա զգացի, որ սխալվել եմ, որովհետեւ իրականությունը բոլորովին այլ գտա, քան որ ենթադրել էի, կատարելով մի շարք հրատարակություններ հակառակ իմ խղճի ու համոզումների։ Եւ որովհետեւ այսօր այլեւս ազատ եմ բոլոր տեսակի հարկադրանքներից ու բռնություններից, հայտնում եմ Ձերդ Վեհափառության, որ հետ եմ վերցնում ու չեղյալ հայտարարում 1924/25 թվականներին Երեւանում իմ անունով լույս տեսած բոլոր հակաեկեղեցական գրքույկներն ու հոդվածները։ Հայոց Եկեղեցու, Մայր Աթոռի եւ նրա հարակից հիմնարկությունների մասին ունեցած իմ կարծիքներն ու զգացմունքները հիշյալ հրատարակությունների մեջ չէ, որ իրենց հարազատ արտահայտությունն են գտել, այլ դրանցից առաջ արտասահմանում գերմաներեն, անգլերեն ու հայերեն լույս ընծայած իմ աշխատությունների մեջ, որոնց բովանդակության համոզված պաշտպանն եմ այսօր եւ միշտ։ Ուր եւ ինչ լինեմ, իմ սրտին շատ մոտ կմնա Հայ Եկեղեցին Մ. Աթոռով եւ իր վեհապանծ գահակալով, ինչպես եւ ինձ պես շատերի համար alma mater *եղող ճեմարանի հիշատակով, որոնց այսքան մոտ զգալս համարձակություն է տալիս ինձ այսօր խնդրելու Ձերդ Վեհափառությունից՝ չմերժել կնոջս խնդրանքը թույլ տալով մեր եկեղեցական ամուսնությունը»[75]։*

Այսինքն՝ եթե եկեղեցական ամուսնության կարիք չլիներ, նա մեղա չէր գա։ Հատկանշական է, որ Աբելը մշտապես հանդես էր գալիս՝ կնոջ անվան տակ քողարկվելով։ Իսկ նրա գրքույկները տեսական-քաղաքագիտական ու կրոնական-եկեղեցական տեսանկյունից բացարձակապես արժեք չէին ներկայացնում եւ ինչպես բարենորոգչական, այնպես էլ ընդհանրապես հակաեկեղեցական շարժման մեջ գաղափարական որեւէ մնայուն հետք չթողեցին։ Հատկանշական է, որ Աբել Նազարյանի անունը հետագայում Սփյուռքում մոռացվեց, եւ նա որդեգրեց խորհրդամետ դիրքորոշում[76]։

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[75] *Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921–1938), էջ 100–101։ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5371, թթ. 1։*

[76] *Տե՛ս* Աբել Նազարեան, *Հայ եւ Հայաստան Սովետական մեծ հանրագիտարանի մէջ, Փարիզ, 1954։ Սովետահայ գրականութեան յատկանիշները եւ հայ ժողովուրդի միասնականութիւնը, Փարիզ, 1954։*